

ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

gayanepoghosyan8787@gmail.com

ORCID iD: 0009-0000-0333-9235

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-620

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱԲՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ» ՊՈԵՄԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԵՆՐԻԿ ՄԱՄՅԱՆԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր - Հենրիկ Մամյան, Ավետիք Իսահակյան, Աբու-Լալա Մահարի, նկարազարդում, պատկերագրություն:

Ամփոփում

Հոդվածը նվիրված է նկարիչ Հենրիկ Մամյանի՝ 1984 թվականին լույս տեսած «Աբու-Լալա Մահարի» պոեմի համար կատարված նկարազարդումների գեղարվեստական նկարագրի վերլուծությանը: Ուսումնասիրության շրջանակում արվեստաբանական քննության են ենթարկվում Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ազդեցությամբ ստեղծված պոեմային սուրահների թեմատիկ փորագրապատկերային հորինվածքների գեղարվեստական հատկանիշներն ու պատկերա-գաղափարական լուծումները: Հենրիկ Մամյանի գրաֆիկական բարձր կատարողական հմտություններով և պատկերագրական տարբերակիչ մանրամասներով առանձնացող նկարազարդումները պատկերի միջոցով լավագույնս մարմնավորում են Իսահակյանական գրական մտքի խոհափիլիսոփայական դրսևորումները:

GAYANE POGHOSYAN

PhD in Arts

Institute of Arts of the NAS RA

gayanepoghosyan8787@gmail.com

ORCID iD: 0009-0000-0333-9235

PICTORIAL CHARACTERISTICS OF AVETIK ISAHAKYAN'S POEM "ABU-LALA MAHARI" IN HENRIK MAMYAN'S ILLUSTRATIONS

Keywords: Henrik Mamyán, Avetik Isahakyan, Abu-Lala Mahari, illustration, iconography.

Abstract

The article is devoted to the study of the artistic description of the illustrations by the artist Henrik Mamyán to the poem "Abu-Lala Mahari, published in 1984. As part of the study, artistic features and pictorial-ideological solutions of thematic engraving compositions of poetic suras created under the influence of the literary work of Avetik Isahakyan, are subjected to the analysis. Illustrations by Henrik Mamyán, distinguished by their high level of graphic mastery of execution and unique iconographic details, best embody the philosophical manifestations of Isahakyan's literary idea through images.

ГАЯНЕ ПОГОСЯН

Кандидат искусствоведения

Институт искусств НАН РА

gayanepoghosyan8787@gmail.com

ORCID iD: 0009-0000-0333-9235

ИЗОБРАЗИТЕЛЬНАЯ ХАРАКТЕРИСТИКА ПОЭМЫ АВЕТИКА ИСААКЯНА «АБУ-ЛАЛА МААРИ» В ИЛЛЮСТРАЦИЯХ ГЕНРИКА МАМЯНА

Ключевые слова: Генрик Мамя́н, Аветик Исаакян, Абу-Лала Ма-ари, иллюстрация, иконография.

Аннотация

Статья посвящена исследованию художественного описания иллюстраций художника Генрика Мамяна к поэме «Абу-Лала Маари», опубликованной в 1984 году. В рамках исследования искусствоведческому анализу подвергаются художественные особенности и изобразительно-идейные решения тематических гравюрных композиций поэтических сур, созданных под влиянием произведения Аветика Исаакяна. Иллюстрации Генрика Мамяна, отличающиеся высоким графическим мастерством исполнения и своеобразными иконографическими деталями, наилучшим образом воплощают философские проявления литературной мысли Исаакяна через образы.

Ներածություն

Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը դեռևս իր անդրանիկ տպագրությունից ի վեր (1911 թ., Կոստանդնուպոլիս, «Արծիվ» գրատան հրատարակչություն, նկարազարդումների հեղինակն անհայտ) հետաքրքրել է տարբեր նկարիչների: Հիշարժան են Մ. Սարյանի 1935 թվականի նկարազարդումներով 2003 թվականին Հալեպում հրատարակությունը, ինչպես նաև հետագա խորհրդային տարիներին՝ 1971 թվականին՝ Վ. Մանդակունու և 1975-ին Ա. Հունանյանի գեղարվեստական ձևավորումները: Սույն հոդվածի շրջանակում քննության են առնվում 1984 թվականին Հ. Մամյանի նկարազարդումները, որոնք առանձնանում են իրենց կատարման մոտեցումներով՝ գրաֆիկական համահունչ պատկերաձևերով լիարժեքորեն արտացոլելով գրական երկի խոհափիլիսոփայությունը:

Հ. Մամյանի հսկայածավալ ստեղծագործական ժառանգության մեջ իրենց գեղագիտությամբ առանձնանում են հատկապես գրքային նկարազարդումները: Պոեմի հիման վրա կատարված, գեղարվեստական տարբերակիչ հատկանիշներով աչքի ընկնող պատկերային մարմնավորումներն առավել ընդգծում են գրական ստեղծագործության տեսողաբար ընկալվող ներքին հոգեբանական մանրամասները: Գրաֆիկ-նկարիչը լայնորեն հայտնի է հենց իր գրքային նկարազարդումներով, որոնք նրա տարերքն են եղել ողջ կյանքի ընթացքում, և որոնցում առավելագույն արտահայտչականությամբ է ներկայացված

նրա մասնագիտական վարպետությունը (Երզնկյան, 1987: 17): Ի տարբերություն այլ նկարիչների էջային պատկերումների՝ Մամյանը գրքային նկարազարդումների համար ներդրել է ողջ բացվածքով հորինվածքներ (Մինասյան, 2014-2015: 223): «Աբու-Լալա Մահարի» պոեմի նկարազարդումներն իրենց վառ պատկերագրական լուծումներից բացի որպես գեղարվեստական արժեք հետաքրքրական են նաև դիտողի կամ ընթերցողի հետ տեսողական հաղորդակցման տեսանկյունից (վիզուալ կոմունիկացիա): Այս նկարազարդումներն իրենց տեքստի բովանդակային համապատասխանությամբ և պատմողական վերարտադրությամբ պարունակում են լայն հաղորդակցային հնարավորություններ: Ավ. Իսահակյանի գրական խոսքը նոր պատկերային կյանք է ստացել մամյանական գրաֆիկայի յուրաքանչյուր գծում, որը որոշակի տեղեկատվություն է ամփոփում իր մեջ՝ ուղղված դիտողին, և այդպիսով, պատկերա-երևակայական տեսակետից առավել հիմնավոր դարձնում տեքստից ստացած տպավորությունները: Այս նկարազարդումներում յուրաքանչյուր դրվագ հատկանշական է ինքնատիպ կատարողականությամբ, որը ոչ թե ուղղակի գրաֆիկորեն փոխանցված պատկերախումբ է, այլ գրական հիմքի գաղափարային մարմնավորում հարթության վրա: Հ. Մամյանի կողմից տեքստային տարրերը վերարտադրված են տեսողական փոխանցման ուժգին ազդակ պարունակող դրվագներով՝ նպաստելով պոեմի գեղարվեստական կերպավորման առավել պատկերավոր ընկալմանը: Պարզ ու լակոնիկ հորինվածքներում նկարչը ընտրել է պատկերագրական այնպիսի մոտեցումներ, որոնք միահյուսվում են գրավոր հիմքին՝ ստեղծելով արվեստի երկու տեսակների ներդաշնանիթեզ: Հ. Մամյանը վարպետորեն է կիրառել պատկերի ստացման և ամբողջացման տեսողական հաղորդակցման միջոցները: Թեև գրքային նկարազարդումների առումով նկարիչն անտեսանելի թելերով կապված է գրական ստեղծագործությանը, սակայն դա չի խոչընդոտել Մամյանին գրաֆիկայի լեզվով ինքնուրույն և ազատորեն արտահայտելու պոեմից ստացված վառ զգայական տպավորություններն ու գաղափարային ընդգրկվածությունը: Հ. Մամյանի կարծիքով՝ լավ նկարազարդումն անքակտելիորեն կապված է գրքի կառուցված-

քի հետև և միաժամանակ կարող է ապրել ինքնություն, գրքից առանձին, որպես հաստոցային ստեղծագործություն (Халатян, 1983): Փոքրաչափ հորինվածքներն ուշադրության են արժանի իրենց կոթողային բնույթի հնչողությամբ և լուսուսովերի ուշագրավ անցումային լուծումներով: Նկարչի կողմից խորապես ուսումնասիրված են գրական ստեղծագործության բոլոր արտահայտիչ մանրամասները՝ այն պատկերի մեջ հոգևոր-զգայական բարձր մակարդակով հաղորդելու համար: Պարզ և միաժամանակ պինդ գծերի միջոցով ստացված են պլաստիկ պատկերաձևեր՝ խոր հոգեբանական հագեցվածությամբ: «Աբու-Լալա Մահարի» պոեմի սյուժետային ընթացքը համեստ պատկերամիջոցներով, բայց պատմողական տրամաբանական շարունակականությամբ սահուն անցնում է դիտողի առջևով: Պատկերադաշտը զուսպ է, գերծավելորդ տարրերից, հորինվածքի առանցքում են գաղափարային կարևորությունը հաղորդող ընգծված գլխավոր կերպարները: Պատկերային հորինվածքներն ստացված են օֆորտի տեխնիկայով, ակվատինտային հատուկ մշակումներով: Գրքի հարդարման համար նախատեսված նկարազարդումային շարքը ներկայացնում է Ավ. Իսահակյանի դիմապատկերը զույգ անվանաթերթի աջակողմյան հատվածում, մտախոհ ուղղված դեպի աջ, սուպերշապիկը (նկ. 1, 2) և 8 սյուժետային հորինվածք՝ կատարված խոր մետաղափորագրության տեխնիկայով: Ստացված պատկերները հագեցված են փորագրատեխնիկայում կիրառվող գունաանյութի բարդ անցումներով, իսկ ակվատինտա տեխնիկայով լրացումները թույլ են տվել ստանալ սևի և պատկերահիմքի սպիտակի միջև գունաօդային ուշագրավ հակադրություն և օդային թեթևություն: Առաջին սուրահի պատկերազարդման համար նկարիչը հետին պլանում ներկայացրել է գիշերային մթության մեջ խորասուզված Բաղդադի ճարտարապետական միջավայրի արտացոլումներին հակադրված հարազատ քաղաքից հեռացող բանաստեղծի և ուղտերի քարավանը (նկ. 3): Բավական ուշագրավ լուծում է գտել նկարիչը հատկապես երրորդ սուրահի մեկնաբանության համար (նկ. 4): Դարձյալ աջակողմյան հատվածում բանաստեղծի կերպարն է ընթացքի մեջ՝ կեղծավոր աշխարհը թողած հետևում, որտեղ հոգեբանական մթնոլորտն են ուժգնացնում թատե-

րական դիմակներն ու կարծես անդրշիրիմյան աշխարհից, ինչպես Իսահակյանն է նշում՝ ահավոր ջեհնեմից (դժոխք), դեպի բանաստեղծը ձգվող կմախքները: Կատարողական բարձր վարպետության շնորհիվ երկչափ պատկերաձևերն ունեն բավական ծավալային արտահայտչականություն: Բոլոր սուրահների նկարազարդումներում կարևոր և ներգործուն ուժ ունի շարժումը, նկարիչը բովանդակությանը համապատասխան հակադրության մեջ է մշտապես պահում հետին պլանն ու դեպի աջ ուղղված Աբու-Լալա Մահարու քարավանի ընթացքը: Այս հորինվածքներում լույսն ունի իր կարևոր և որոշիչ դերը հատկապես մտազգայական արտահայտումներում: Լուսային հակադրությունների և պատկերաձևերի ընդգծված արտահայտչականության շնորհիվ ամրապնդվում է տեքստից ստացված ներքին հոգեբանական լարվածությունը: Առկայծող լուսային դրվագներն ազդեցիկ նշանակություն ունեն մթին պատկերադաշտերում, ինչպես, օրինակ՝ սուպերշապիկի հորինվածքում կամ վերջին սուրահում (նկ. 5): Վերջինս հանդիսանում է գրական երկը պատկերային կերպով ամփոփող կուլմինացիոն հատվածը: Հենրիկ Մամյանին հաջողվել է բավական ինքնատիպ և միաժամանակ գրական հիմքին համահունչ մոտեցմամբ եզրափակել իսահակյանական հոգեխոռվ խոսքերը. «Եվ ոսկեփոփոթ ծիրանին ուսին Աբու Մահարին, մեծ բանաստեղծը, Թռչում էր անդուլ՝ հաղթական ու վեհ, դեպի արևը, անմահ արևը...» (Իսահակյան, 1984: 70): Հորինվածքներում, հետին պլանի համար նկարիչը կիրառում է արևելյան թեմատիկ միջավայրը խորհրդանշող տարրեր՝ համակված գրական ոգու ներշնչանքով և սեփական երևակայական պատկերացումներով: Ուշագրավ է բոլոր թերթերում նկարչի նախընտրած դեպի աջ հորինվածքային կառուցվածքի ուղղվածությունը: Բոլոր հորինվածքներում, գլխավոր առանցքային Աբու-Լալա Մահարու՝ արաբ բանաստեղծի կերպարն առանձնանում է կերպարի փոխանցման իրատեսական բնույթով և հոգեկերտվածքի վառ հատկանիշներով, ինչպես նաև գրական հերոսի ներքին էության դրսևորման մեծ թափով: Ինչպես իր մյուս, այս գրաֆիկական շարքում ևս Հ. Մամյանի վիրտուոզ մաներային ինքնատիպությունն արտացոլված է հարթության վրա ստվերագծային բարդ ու բազմազան

մոտեցումներով, լուսավորման անցումային փոխակերպումներով, որոնց հատուկ է գեղանկարչական արտահայտչականության միտում: Հորինվածքներն օժտված են գրական բովանդակությունը լրացնող ներքին ողբերգականությամբ և էքսպրեսիայով: Պատկերազարդումներում նկարիչը դիմում է իրեն հատուկ ընդհանրացումներին՝ ընդգծելով թեմայի կարևոր դրվագները: Ինչպես ժամանակին նշել է Ա. Բեքարյանը՝ Մամյանին հատուկ է հորինվածքային հոյակապ կառուցվածքը, արտահայտիչ գիծն ու կատարողական բարձր վարպետությունը (Հենրիկ Մամյան, 1980): «Աբու-Լալա Մահարի» պոեմից ներշնչված պատկերներն ընդգծված խորհրդավորությամբ են պարուրված: Այս գրական ստեղծագործության համար նկարիչն ընտրել է բավական համարձակ և չկրկնվող գեղարվեստական լուծումներ, որոնք տարբերակում են նրա ձեռագիրը: Ինչպես գրել է Լ. Դուրյանը, Հ. Մամյանը գրքի այն նկարազարդողներից է, որ յուրատեսակ մտահղացումներով գունավորում է գրողի ներաշխարհը՝ իր նկարչական աշխարհը խառնելով նրա ստեղծագործական թռիչքներին (Դուրյան, 2000): 1984 թվականի հրատարակության մեջ նկարազարդումները տեղաբաշխված են առանձին նախատեսված հատվածում և մուտք են հանդիսանում յուրաքանչյուր սուրահի համար: Գրքի յուրաքանչյուր սուրահին նախորդող պատկերազարդում աչքի է ընկնում պատկերադաշտի և պատկերաձևերի միջև կառուցված գեղարվեստորեն ճիշտ փոխհարաբերությամբ, իսկ լակոնիկ հորինվածքի ընդգծված կերպավորումներն ու խորհրդաբանությունը դարձնում են ստեղծագործությունը բավական նկարագրողական՝ միաժամանակ սրելով ընթերցող-դիտողի երևակայությունը: Մոնոքրոմ գունային միջավայրը հորինվածքներում նպաստում է առավել խոր հուզական արտահայտչականության, իսկ տարբեր ուժգնության ստվերագծերով ստեղծված դիմի և դադարի համադրությունը ներքին դինամիզմ է հաղորդում ստեղծագործությանը: Այս առումով տեղին կլինի հիշատակել Վ. Մնացականյանի խոսքերը. «Մամյանի նկարազարդումներում կա մարդու ոգուն թեթևություն բերող, ճշան գույներից հեռու հարուստ մի զգացում, որը նույնպես տքնությամբ է ձեռք բերվել» (Մնացականյան, 1991):

Եզրակացություն

Հ. Մամյանի կատարմամբ՝ «Աբու-Լալա Մահարի» պոեմի նկարազարդումներն ընկալվում են ոչ միայն զուտ որպես գրական ստեղծագործության պատկերագրական մարմնավորում, այլև երկչափ հարթության մեջ ազատ ու անկաշկանդ մեկնաբանմամբ ինքնուրույն արժեք ձեռք բերած հորինվածքներ: Գրաֆիկական հարուստ զինանոցին տիրապետելու հմուտ վարպետությամբ և հոգեբանին հատուկ վերլուծական հատկանիշների շնորհիվ Հ. Մամյանին հաջողվել է, հարազատ մնալով հայոց պոեզիայի մեծարժեք երկի սուրահներում զետեղված հեղինակային գրվածքին, գեղարվեստական ինքնատիպ արտահայտչամիջոցներով պատկերային նոր կյանք հաղորդել և ամբողջացնել ընթերցումից ստացված երևակայական պատկերացումները:

«Ես սպրուկի պես ծառայում եմ գրքին»

Հենրիկ Մամյան



Նկար 1 (Զույգ անվանաթերթ, օֆորտ, ակվատինտա, 34x41 սմ, 1984 թ., Մամյան, 2009)



Նկար 2 (Սուպերշապիկ, օֆորտ, ակվատինտա, 34x25.5 սմ, 1984 թ., Մամյան, 2009)



Նկար 3 (Առաջին սուրահ, նկարազարդում, օֆորտ, ակվատինտա, 34x49 սմ, 1984 թ., Մամյան, 2009)



Նկար 4 (Երրորդ սուրահ, նկարազարդում, օֆորտ, ակվատինտա, 34x49 սմ, 1984 թ., Մամյան, 2009)



Նկար 5 (Ութերորդ սուրահ, նկարազարդում, օֆորտ, ակվատինտա, 34x49 սմ, 1984 թ., Մամյան, 2009)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Դուրյան Լ.**, Նա ոգի է հաղորդում // Գրական թերթ, 2000, 23. 06:
2. **Երզնկյան Մ.**, Հենրիկ Մամյանի գծանկարչությունը, Երևան, «Սովետական Հայաստան», 1987, թիվ 9, էջ 17:
3. **Իսահակյան Ավ.**, Արու Լալա Մահարի, Երևան, «Սովետական գրող», 1984, 69 էջ:
4. **Հենրիկ Մամյան**, կատալոգ (առաջաբ.՝ Բեքարյան Ա.), Երևան, «Հայաստանի նկարիչների միություն», 1980, 16 էջ:
5. **Հենրիկ Մամյան**, պատկերագիրք (առաջաբ.՝ Թոքմաջյան Հ.), Երևան, Երևանի Ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, 2009, 230 էջ:

6. **Մինասյան Ն.**, Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի նկարազարդման պատմությունից // Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք, 2014-2015, թիվ 2-3, էջ 217-227:
7. **Մնացականյան Վ.**, Գույք ոգու անմահության // Հայաստանի Հանրապետություն, 1991, 7. 05:
8. **Халатян Н.**, Вечно открытая выставка // Комсомолец, 1983, 15. 07.

REFERENCES

1. **Duryan L.**, Na vogi e haghordum [He gives a Spirit] // Grakan tert, 2000, 23. 06.
2. **Yerznkyan M.**, Henrik Mamyani gcankarchutyuny [Henrik Mamyani's drawings], Yerevan, "Sovetakan Hayastan", 1987, tiv 9, ej 17.
3. **Isahakyan Av.**, Abu-Lala Mahari, Yerevan, "Sovetakan grogh", 1984, 69 ej.
4. **Henrik Mamyani**, Catalog (araj. Tokmajyan H.), Yerevan, Yerevani chartarapetutyun ev shinararutyun petakan hamalsaran, 2009, 230 ej.
5. **Minasyan N.**, Avetik Isahakyan "Abu-Lala Mahari" poemi nkarazardman patmutyunic [From the history of illustrations of Avetik Isahakyan's poem "Abu-Lala Mahari"] // Gegharvesti akademiayi taregirq, 2014-2015, tiv 2-3, ej 217-227.
6. **Mnacakanyan V.**, Govq vogu anmahutyun [Praise of the Immortality of the Soul] // Hayastani Hanrapetutyun, 1991, 7. 05.
7. **Khakatyan N.**, Vecho otkritaya vistavka [Always open exhibition] // Komsomolec, 1983, 15. 07.